# ՑՈՒՑԱԿ ԵՒ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐ

## ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Գ. ԿԻՒԼՊԷՆԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

### ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱՏԻՊ ԳԻՐՔԵՐՈՒ

### (1512 — 1800)

## 357

*Ս. ՆԵՐՍԷՍ ԼԱՄԲՐՈՆԱՑԻ. ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՃԱՌՔ: Վենետիկ, տպ. Յովհաննէս Փիացեան,* 1787, 100 *էջ:*

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

*ՍՐԲՈՅ ՀՕՐՆ ՄԵՐՈՅ ՆԵՐՍԷՍԻ ԼԱՄԲՐՈՆԱՑՒՈՅ Արքեպիսկոպոսի տարսոնի կիլիկեցւոց. ԱՏԵՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ. ԵՒ ՃԱՌՔ ԸՆՏԻՐՔ ի համբարձումն քրիստոսի, եւ ի գալուստ հոգւոյն սրբոյ:*

*Տպագրեալ բաղդատութեամբ ուղղագոյն օրինակաց:*

*Ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու Հայոց կաթուղիկոսի: Յամի տեառն.* 1787. *ի Հոկտեմբերի.* 1. *Եւ ի Թուականութեանս հայոց.* ՌՄԼԶ:

*Ի Վենէտիկ Ի տպարանի յովհաննու փիացեան:*

*Հրամանաւ մեծաւորաց:*

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

*Չունի:*

*Կիւլպէնկեան Մատենադարան*
230-153 *Լա*

## 358

*ՅՈՎՍԷՓՈՍ ՓԼԱՒԻՈՍ. ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ ՅՈՎՍԵՊՈՍԻ ԵԲՐԱՅԵՑՒՈՅ ԱՐԱՐԵԱԼ ՅԱՂԱԳՍ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՀՐԷԻՑ ԸՆԴ ՀՌՈՎՄԱՅԵՑԻՍ: Թրգմ. Ստեփանոս Լեհացի: Էջմիածին, տպ. Ս. Գրիգոր Լուսաւորչի,* 1787, 496 *էջ:*

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Ա

*ՊԱՏՄԱԳԻՐՔ ԱՐԱՐԵԱԼ ՅՈՎՍԵՊՈՍԻ եբրայեցւոյ յաղագս պատերազմին Հրէից ընդ Հռոմայեցիս, եւ աւերմանն Երուսաղէմի եւ Տաճարին նորա:*

*Թարգմանեալ ի Լատինացւոց բարբառոյ ի մեր լեզու, աշխատասիրութեամբ երջանկակրօն Միաբանի Քրիստոսաէջ սրբոյ Գահին Տեառն Ստեփաննոսի գերիմաստ Վարդապետի Իլովացւոյ, քաջահմուտ եւ հարազատ թարգմանչի, ի թուականութեան մերում,* ՌՃ:

*Իսկ նորոգեալս տպագրութեամբ ի լոյս ածեցեալ ի սոյն ձեռագրէ նորին Թարգմանչին ի Լուսաւորչայ Աթոռս սուրբ Էջմիածին, վեհափառ հրամանաւ Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի ամենայն Հայոց, ի յեօթներորդում ամի Հայրապետութեան նորին:*

*Եւ ի Պատրիարգութեան սրբոյ Երուսաղէմի եւ Կոստանդնուպօլսոյ, տեառն Յովակիմայ եւ տեառն Զաքարիայ Աստուածիմաստ Վարդապետաց եւ Արքի Եպիսկոպոսաց:*

*Ի տպարանի Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:*

*Ի Թուոջ Փրկչին,* 1787. *եւ ի մերում Թուականիս,* ՌՄԼԶ:

digitised by A.R.A.R.@

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Բ

ԳԻՐՔ ՊԱՏՄՈՒԹԵԱՆՑ Յովսեպոսի Եբրայեցւոյ որոտեալ յաղագս Պատերազմի Հրէից ընդ Հռովմայեցիս. եւ աւերման Երուսաղէմի: Թարգմանեալ ի Լատինացւոց բարբառոյ ի Հայ լեզու, ի ձեռն ուրումն Խլովացւոյ Ստեփաննոսի Աստուծոյ ողորմութեամբ:
Ի փառս Քրիստոսի Աստուծոյ յաւիտեան բնաւից:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Բան առ ընթերցօղս. եւ Յիշատակարան տպագրման գրոցս:

Ենովթեան մարդոյն···

Իսկ ի Ժողովեալս Ջուղայեցի Պօղոսեան բարեաւք մահտեսի պարոն Աւչիկն խնդրեալ էր ի Սրբազան Վեհափառէս մերմէ ի Տէր Ղուկաս Աստուածընտիր Կաթողիկոսէս ամենայն Հայոց, տպագրութեան գալ ի սուրբ Աթոռոյս, տրդեամբք նորին: Որոյ զխնդիրն ոչ անտես առնելով բարեխնամ Հայրապետս մերոյ, մանաւանդ՝ տեսանելով եւս թէ հարկաւորիւ է այս գիրք յազգի մեր, եւ եկեղեցւոյ չաւսէն եւս բազմատառ ի գրչաց անհմտութենէ, վասնորոյ հրամայեաց ի տպագրել: Եւ մինչ սկսաք տպել զգիրքս, թէպէտ եւ եկին ի ձեռս մեր օրինակք գրեցեալք յայլ գրչաց, ամենք աղաւաղք եւ ամենք սխալք, այլ մեք զայնս հետեւեալ գրքոյս միայն համեմատեցաք. եւ զայնպիսին որ կայ ի մէջի, ի հեղինակէն առաք, այս է զձեռագրէն՝ զոր նոյն ինքն Խլովացի տէր Ստեփաննոս վարդապետն իւր ձեռամբն էր գրեալ: որ եւ նոյնն եղեալ կայր ի գրատանն սրբոյ Աթոռոյս Էջմիածնի: Յորմէ օրինակեցաք զայսպէս՝ ոչ ինչ յաւելեալ կամ պակասեցուցեալ եւ ոչ փոփոխեալ ինչ, որպէս թէ զայս բառ հալով եւ զայն գնելով, ոչ ի բառս եւ ոչ ի բանս···

Տեսցուք այսուհետեւ զայնս՝ որք եղեն պատճառք եւ օժանդակք տպագրման գրքոյս, եւ են արժանիք յիշման. զորս գրուշմամբ սառէն եւ խնդրեմք ի ձերց աստուածասիրութենէ՝ զի որք եւ ընթեռնուք զգիրս, յիշեսջիք ի Քրիստոս, նախ՝ զՏէր Սիմէոն մեծաշնորհ Կաթողիկոսն զհանգուցեալ Տպարանիս, զփոխեցեալն առ Քրիստոս, զոր նոյն ինքն Տէր հանգուցէ յարքայութեան իւրում: Ընդ նմին յիշեսջիք եւ զՅովսէփ Պատճառս նորին զՍրբազան Հայրապետս ամենայն Հայոց զՏէր Ղուկաս վեհափառ եւ բարեխնամ Կաթողիկոսս, հանդերձ երկիւղածութեամբ. որ ի վերայ այլ բազմազան հոգոցն ջանայ եւ զօրաւոր գրեանս ի լոյս ածել, որպէս եւ զայս էած: Որում Տէր լիցի օգնական յարաժամ:

Այս յիշելի է ի բարին եւ ընդ միաբանն սրբոյ Աթոռոյս, Մինաս Աբէ Եպիսկոպոսն, որ հարազատօրէն ընթերցեալ զհեղինակն գրքոյս, զհատն ամենայն գրուածոյն պարգեւաց, եւ ի յերկարութեան տանջն, զխուզարկչէր բանս գլխագրոյ տեսանեց վերստին առ հարկաւորութեանն:

Ընդ որում եւ հոգեծին որդին սրբազան Վեհափառին, Թադէոս նորընծայ վարդապետն, որ սրբագրեաց զփորձան կատարեալ գրոցն չարուածոյ:

Յիշեսջիք եւս զաւագն ծախուց հատուածման Տպարանիս, զՋուղայեցի առ Քրիստոս փոխեցեալ Աւչաճանեան Զաքիրենց յուսահոգի Գրիգոր Աղայն, եւ զհանգուցեալ ծնողսն իւր, եւ զորդին, եւ զամենայն ազգայինսն, եւ զկենդանի քոյրն նորա զբարեպաշտուհի Ջիպիտայն: Որոց ամենեցուն ողորմեսցի Տէր:

Եւ մանաւանդ յիշեսջիք զնախագրեալ Ջուղայեցի Քրիստոսասէր եւ բարեպաշտ մահտեսի Աւչիկ Աղայն, եւ զծնօղսն իւր զՊօղոսն եւ զՄէլքորմանն, եւ զքոյրն իւր Հռիփսիմէն, եւ զկենակիցն իւր զՇէքրխաղն, եւ զդուստրն Յաղիսայն, եւ զայլ ամենայն ազգայինսն իւր զկենդանիս եւ զննջեցեալսն: Քանզի նոյն օժանդակութեամբ սոյն եւ զծախսն տպագրման գրքոյս ի բարի յիշատակ իւր եւ իւրայնոցն: Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի. եւ զփոխարէնն որոց նորին բազմապատկեալս հատուսցէ Քրիստոս Նմա եւ իւրոցն զխորհս աստ եւ ի հանդերձեալ կեանսն:

Այլեւ՝ յիշեսջիք զԱհարոնն գրոցս եւ կազմողս եւ ծաղկողս, զմարգետ Յարութիւնն Վաղարշապատեցի, հանդերձ աշակերտին իւրով տիրացու Աւշատուրին: Եւ զգործաւոր Մարգարեայն, եւ զտիրացու Աղէքսանդրն, եւ զայլ աշխատաւորս գործարանիս:

Եւ յիշօղքդ աշխատողացըս բարեկէս,
յիշեալք լիջիք ի Քրիստոսէ արժանապէս:
Որում ընդ Հօր եւ սուրբ Հոգւոյն համապատիւ,
ի համօրէից մատուսցի մինչ փառք եւ պատիւ: Ամէն:

Կիւլպէնկեան Մատենադարան
933 Յո

digitised by A.R.A.R.@

## 359

ԲԷԹԻՍԷ ՏԷԼԼԱ ՔՌՕՉԷ. ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ՃԷՆԿԻԶԽԱՆԻ։ Թրիեստ, տպ. Մխիթարեան Միաբանութեան, 1788. 4 չհ.+544=548 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԵԾԻՆ ՃԷՆԿԻԶԽԱՆԻ Առաջին Կայսեր Նախնի Մողուլաց եւ Թաթարաց. Բովանդակեալ ի չորս գիրս. Որ բովանդակէ զվարս մեծ խանին. Զամբառնալ նորա, եւ զաւրապետութիւնս հանդերձ համառօտ պատմութեամբ յաջորդաց իւրոց, որք մինչեւ ցայսօր թագաւորեն։ Զբարս, զսովորութիւնս, եւ զօրէնս նախնի Մողուլաց եւ Թաթարաց, եւ զաշխարհագրութիւն ընդարձակ գաւառաց Մողուլաստանի, եւ արեւելեան եւ արեւմտեան Թաթարաստանի։

Թարգմանեալ եւ հաւաքեալ ի բազում արեւելեան Մատենագրաց, եւ ճանապարհորդաց Եւրոպիոյ. զորոց զանուանս եւ զհամառօտ վարս է տեսանել ի վախճանի գրոցս։ Ի պարոն Բէթիսէ տէլլա Քռօչէ ի ծերոյն, որ էր դպրապետ եւ թարգման արքային Գաղղիոյ ի լեզուս տաճկաց եւ Արաբացւոց։ Թարգմանեալ ի հայ բարբառ յԱղայ Մարգարայ Շէհրիմանեան, ի մշանջենաւոր յիշատակ ամուսնոյ իւրոյ արինոյ Նահանճանի։ Եւ բազմերախտ օգնութեամբ սրբագրեալ ի վերայ իտալականին ի Հ. Աստուածատուր վարդապետէ Բարեկեան, ի միաբանութենէ ամենապատիւ տեառն Մխիթարայ Բարունապետի եւ Աբբայի։

Տպագրեալ յամի տեառն 1788։ Ի Թրիեստ։ Ի տպարանի հարց Մխիթարեանց. Հրամանաւ մեծաւորաց։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Չունի։

Կիւլպէնկեան Մատենադարան
923.1 Ծէ

## 360

ԽԱՉԱՏՈՒՐ ՎՐԴ. ՍՈՒՐՄԷԼԵԱՆ. ՀԱՄԱՌՕՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ։ Վենետիկ, տպ. Յովհաննէս Փիացեան, 1788. 160 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՀԱՄԱՌՕՏ ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ ԱՇԽԱՐՀԱԲԱՌ

Յորում հասին նախ յաղագս չորից գլխաւոր մասանց թուաբանութեան։ Երկրորդ յաղագս կոտորակեալ թուոց։ Եւ երրորդ յաղագս գլխաւոր կանոնաց թուաբանութեան։ Յաւելեալ լինի եւ յաւելուած յաղագս խաղուց ի ձեռն թուոց ի զրօսանս մտաւորաց։

Աշխատասիրեալ ի Հայր Խաչատուր վարդապետէ Սուրմէլեան, ի միաբանութենէ գերյարգոյ Մխիթարայ մեծի աբբայի։

Յամի տեառն. 1788. ի Փետրվարի. 15։ Եւ ի թուականութեանս Հայոց. ՌՄԼԷ։ Ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու Հայոց կաթուղիկոսի։

Ի Վենէտիկ ի տպարանի յովհաննու փիացեան։ Հրամանաւ մեծաւորաց։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Չունի։

Կիւլպէնկեան Մատենադարան
511 Սւ.

digitised by A.R.A.R.@

361

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԴԱՐԵԱՆ. ՇԱՒԻՂ ԼԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ: Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանի, 1788. ժր (12)+156=168 էջ:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ԳԻՐՔ ՈՐ ԿՈՉԻ ՇԱՒԻՂ ԼԵԶՈՒԱԳԻՏՈՒԹԵԱՆ: Արարեալ մանրաքննին ուղղագրութեամբ Նոր Ջուղայեցի՝ Ազնուատոհմ Սերնդոյն Խալդարեան յառաջատեսեալ՝ Աղէս. Ռօշամալի որդի՝ ի Քրիստոս հանգուցեալ ի Պարոն Գրիգորէ:

Ի Հայրապետութեան՝ Քրիստոսակիր Սրբոյ Գահին էջմիածնի՝ Տեառն Ղուկասու Երիցս Երանեալ Սրբազնասուրբ Կաթուղիկոսի ամենայն Հայոց: Հրամանաւ՝ Սրբոյ Աթոռոյն էջմիածնի՝ Մայրաքաղաքն Նուիրակի՝ Ռուսաց երկրի՝ և յամենայն հիւսիսային կողմանս եղեալ ազգիս Հայոց՝ Առաքելաշաւիղ Առաջնորդի՝ Սանահնեցի Երկայնաբազուկ Արգութեանց՝ Իշխանազնեայ Տեառն Յովսեփայ Սրբազնագունեղ Արք Եպիսկոպոսի:

Տպագրեցեալ արդեամբք և ծախիւք՝ նորին Լուսահոգւոյն՝ Պարկեշտասուն կենակից՝ Կատարինէ Զաքարօմեայ Ազնուուհւոյն: Յամի Տեառն 1788. ի դեկ. 2: Իսկ ի Թուին Հայոց՝ ռմլէ: Ի կայսերականն Մայրաքաղաքս Սանկտպետերբուրգ: Ի տպարանի՝ նորին Լուսահոգւոյն: Հրամանաւ Կառավարչաց Բարեկարգութեան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յիշատակարան Գրքոյս:

Փառք...

Որք արժանացոյց զմեզ նուաստութեան՝ տպագրութեամբ ի յաւարտ հասանել՝ զԵռավարժից արգիւնաւոր՝ Շաւիղ Լեզուագիտութեան կոչեցեալ Գրքոյս:

Ընդ որոյ՝ և արժան գտեալք ի մի շարադասել՝ զվաղեմի զաշխատասիրութեան Հեղինակի Գրքոյս՝ զՀաւատով խոստովանիմ աղօթսն ազգաւ Սրբոյն Ներսէսի Շնորհալւոյս և Տիեզերահռչակ Հայրապետին մերոյ. որ նոյն՝ ի Քրիստոս հանգուցեալ Խալդարեան Պարոն Գրիգորն՝ ի սէր համազգի եղբարցն իւրոց բաւականեաւ զգուշաւորութեամբ՝ հարազատաբար թարգմանեալ էր...

Ուրեմն ... յիշման արժանի համարեսջիք զաշխատաւոր Հեղինակն սորա՝ զ'ի Նոր Ջուղայու Ազնուատոհմ Խալդարեանց Ռօշամալի որդի՝ զ'ի Քրիստոս հանգուցեալ զՊարոն Գրիգորն. որ ի բոլոր կեանս իւր ծառայելն բաց կարի՝ համանորունդ եղբարցն իւրոց Հայկազնեայց՝ պարծանս ինչեան և փառս ունէր առաւել վարկեալ:

Մանաւանդ եւս՝ յիշեսջիք ի խնկաւորեալ յաղօթս ձեր զյարգի պատճառ ապեցման եւ ի լոյս ածեցման Գրքոյս՝ զվերոյգրեալ Լուսահոգւոյն Պարկեշտասուն կողակից՝ զԿատարինէ Զաքարօմեայ՝ զկինն ժրաջանի. որ արդարեւ բազ դրոյն՝ մեծաջան փափագմամբ (որպէս յիշեալ եմք ի յառաջաբանութեան) անխնայ ի ծախս դրամոց, ի յայրատունս պարտիզէ՝ զերփներփն անթառամելի ծաղկունս բառից՝ մեծաւ թախանձանօք ի մի հաւաքեցուցեալ՝ իբրեւ զմանեկածեւ պսակս՝ ի գլուխ առն իւրոյ՝ ամուսնոյ. եւ զերազգիս բազմանշոյլ՝ զճառագայթն համանշաբախ՝ տպագրութեամբ իբրու ի յաշտանակ բարձրացուցեալ առ Հայկազեան ամենայն համազգեաց՝ ուրախութեամբ արար շողշողել:

Ուրեմն՝ ի վայելելն ձեր զայսքան բարութիւնս, արժան համարեսջիք յիշատակելոյ զդա մարմնոյ Պաղն սորին՝ զՋալլիբեկեանց Վիւսէղն, զ'ի Քրիստոս հանգուցեալ զծնողն իւր՝ զամենաբարեպաշտ Զալիբն, եւ զՓէբրենաց տիկինն պարկեշտագնեաց, զԱլղապատ եղբայրն. եւ զՍոփիա քոյրն: Նոյնպէս՝ յիշեսջիք եւ զպարկեշտասուն կենդանի քուերս սորին՝ զՄկրտանեայն, զՀռիփսիմէն, զԹագուհին, զՆուրմայրն, զՄիա Ոսկանեայն, եւ զԿատարինեայն. և զեղբարսն՝ զՎիւսէղն, եւ զՄկրտումն:

Հաւէտ յեւս յիշեսջիք եւ զարժանն յիշատակելոյ՝ զնախկին Սահմանողին Տպարանիս՝ եւ Հեղինակին Գրքոյս, Լուսահոգի Խալդարեան Պարոն Գրիգորի՝ զհոգեծին զաւակ եւ զԾնունդաւուն հարազատ զՊարոն Մկրտումն Աստուածատուրեան, որ ի պատանեկութենէ իւրմէ՝ ոչ սակաւ աշխատանս կրեալ է, եւ կրէ մինչ ներ գործարանիս, ի պայծառութիւն Հայկազեան ամենեցուն՝ ներով ծառայել, թէ ի ձուլելն, թէ ի հարթելն, թէ ի շարելն, եւ թէ ի յրուելն զկապարեայ տառսն:

digitised by A.R.A.R.@

*Եւ որք յիշէքդ՝ յիշեալ լիջիք ի միւսանգամ գալստեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ամէն:*

*Կիւլպէնկեան Մատենադարան*
463·917 *Խա*

## 362

**Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ. ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳ ԵՐԳՈՑԻ,** *Վենետիկ, տպ. Ս. Ղազար,* 1789. 216 էջ:

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*Ինկած է:*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

Մատենադարանիս միակ օրինակին թերթերը կը պակսին վերջաւորութեան: Վերջին էջն է 206:

*Կիւլպէնկեան Մատենադարան*
248 *Նա*

## 363

**ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ:** *Վենետիկ, տպ. Ս. Ղազար,* 1789. 336 էջ:

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ:*

*Տպագրեալ յամի տեառն* 1789. *ի մարտի.* 2: *Եւ ի թուականութեան հայոց.* ռմլը: *Ի Հայրապետութեան Տեառն Ղուկասու հայոց կաթուղիկոսի:*

*Ի Վէնէտիկ: Ի Վանս սրբոյն Ղազարու: յանուն անդամի տպոթոյ: Հրամանաւ Մեծաւորաց:*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Չունի:*

ԾԱՆՕԹ.

1) Մեր օրինակը կը պարունակէ չորս Աւետարանները: «*Հայ Հնատիպ Գրքի Մատենագիտական Ցուցակ*»ը կը նշէ 728 էջ:

2) Այս թուականէն (1789) սկսեալ Վենետիկի Մխիթարեան Միաբանութեան գիրքերը կը տպագրուին Ս. Ղազարի սեփական տպարանին մէջ: Բայց գիրքերու անուանաթերթերուն վրայ կ՚երեւի բացատրութիւնը՝ «Ի Վանս Ս. Ղազարու, յանուն Անտոն Պօրտոլի»:

*Կիւլպէնկեան Մատենադարան*
225·4
1789

digitised by A.R.A.R.@

## 364

ՇԱՐԱԿՆՈՑ։ Ս. Էջմիածին, տպ. Ս. Էջմիածնի, 1789. 895 էջ։

### ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ

ՇԱՐԱԿՆՈՑ. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԵՐԳԵՑՄՈՒՆՔ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՔ Աստուածային, եւ երջանկաց սրբոց Վարդապետաց մերոց Թարգմանչաց, զկարգաւորութիւնս Եկեղեցւոյ Վայելչացուցանողաց։

Տպագրեցեալ ի Սուրբ Էջմիածին. ի Հայրապետութեան, եւ հրամանաւ իսկ՝ Տեառն Ղուկասու Սրբազան Կաթուղիկոսի ամենայն Հայոց։ Եւ ի պատրիարքութեան սրբոյ Երուսաղէմի՝ եւ Կոստանդնուպոլսոյ՝ Տեառն Յովակիմայ եւ Տեառն Զաքարիայ արհի Եպիսկոպոսաց։

Յամի Քրիստոսի Փրկչին մերոյ, ռչձթ։ Եւ ի Թուականիս Հայոց, ՌՄԼԸ։ Մախիւք Ջուղայեցի Դէլփօքեանց Ճակրեան բարեպաշտ Յօհաննէսն աղային՝ բնակեցելոյ ի Սուրաթ քաղաքի։

### ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Յիշատակարան Տպեցման եւ Տպողաց Շարակնոցիս։

Նպաստամատոյց ... ի կատարումն եղեւ բերել Տպագրութիւն Երաժշտական հոգեշնորհ սուրբ Տառիս Շարակնոցի, ընդ հովանեաւ Լուսանկար երկնաքատակ Աթոռոյս սուրբ Էջմիածնի։...

Արդ ... յիշեսջիք յարժանաւոր մաղթանս ձեր սեան սիրով ի միտս բարիս զկատարողն Տպարանիս եւ զհոգացօղն ամենայն հանդամանացն՝ զլուսներախտ բարեյիշատակ Տէր Սիմէոն սրբազան Կաթուղիկոսն զփոխեցեալն առ Քրիստոս։ Ընդ նմին եւ զՋուղայեցի Խօջաջանեան չակիկենց լուսահոգի Գրիգոր աղայն Միքայէլեան, հանդերձ ամենայն նորայնովքն, եւ կենդանի քերբն նորին՝ բարեպաշտուհի Զիպիտայիւն։

Մանաւանդ՝ յիշեսջիք զկատարեալն Աստուածասիրութեամբ եւ բարեպաշտութեամբ, եւ զառաւելեալն բազմազան բարեգործութեամբ, զաստ պարգեւն յեկեղեցի աստուծոյ՝ զՋուղայեցի մեծահամբաւ ազնուական Յօհաննէսն աղայն բնակեալ ի Սուրաթ քաղաքի։ եւ ընդ հանգուցեալ հոգեւոյս ծնողսն իւր՝ զՅակոբն եւ զՄէրիբրանն. զհայրենի պապն եւ զհանին իւր՝ զԴէլֆաք աղայն եւ զՔաղաւէհն. եւ զմայրենի պապն եւ զհանին իւր՝ զԱզամայն եւ ըզՎայիխայն։ եւ զեղբարսն իւր՝ զԱւետիք, զԴէլֆաք, եւ զԱբրահամ աղայսն. եւ զքորսն՝ ըզԱզիզն, զՔաղաւէհն եւ զՄաթիկն։ եւ զերկիւղածասէր կինն իւր՝ զզաստամիտ Գուլխաթունն. եւ զհամեստուհի զաւակսն իւրեանց՝ զՎայիխայն եւ զԹիրվանտայն. եւ զեղբայրն կնոջ իւրոյ՝ զբարեպաշտ եւ ազնուամիտ Պարոն Խաչիկ աղայն, որ ի կալկաթա. եւ զծնողսն նորա զՊարոն Աստքեն, եւ զԹիրվանտայն։ Եւ զայլ ամենայն ազգայինսն իւր՝ զկենդանիսն եւ ըզննջեցեալսն։ Քանզի՝ նորին բարեպաշտպարտ ձեռին Յօհաննէսն աղայի տատանուէր արդեամբքն եւ ծախիւքն տպագրեցաւ սուրբ Շարակնոցս, որպէս եւ ի սկզբան անդր նշանակեցեալ է։ Որ եւ բարեսնաւ բազմօրք խնդրէ զայլ եւս հարկաւորագոյն գրեանս տպագրել տալ ի սուրբ Աթոռոյս յանմահ յիշատակ իւր եւ իւրոցն։ Որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի։...

Համարեսջիք արժանիս յիշման եւ զվարպետ Յարութիւն՝ զնկարիչն եւ քանդակիչն պատկերաց՝ ծաղկանց եւ բոլորից գրոց սուրբ Գրքոյս. եւ զաշխատակիցն ի սրբագրութիւն կապարեայցն չորուածոց՝ զտէր Խաչատուր քահանայն։ Ընդ սոսա եւ զգրաշար ծառայս Աղէքսանդր սարկաւագն, եւ զայլս աշխատեալս ի տպագրութիւն սորին։ Եւ որք յիշէք, եղիցիք յիշեալք ի Քրիստոսէ ողորմութեամբ նորին։

Կիւլպէնկեան Մատենադարան
264·Т
1789

digitised by A.R.A.R.@

## 365

*ԱՌԱԿՔ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ։ Վենետիկ, տպ. Ս. Ղազար,* 1790. 216 *էջ։*

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*ԱՌԱԿՔ ԵՒ ՈՏԱՆԱՒՈՐՔ ԽՐԱՏԱԿԱՆՔ։*

*Աւանդեալք ի նախնեաց մերոց՝ ի հրահանգ ուսումնասէր համբակաց։*

*Տպագրեալ յամի տեառն* 1790. *ի Յունվարի.* 18։

*Եւ ի թուականութեան հայոց.* ռմլթ։

*Ի հայրապետութեան տեառն Ղուկասու Հայոց կաթուղիկոսի։*

*Ի Վէնէտիկ։ Ի Վանս սրբոյն Ղազարու։ յանուն անտոնի պօռթոլի։ Հրամանաւ մեծաւորաց։*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

*Չունի։*

*Կիւլպենկեան Մատենադարան*
390-9 *Առ*

## 366

*Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ. ՆԱՐԵԿ։ Կ. Պոլիս, տպ. Յովհաննէսի եւ Պօղոսի,* 1790. 350 *էջ։*

*ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ*

*ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ ՀՕԴԵԿԻՐ ՀՌԵՏՕՐԻ։*

*Բաշխեալ յիննսուն եւ հինգ բանս՝ հոգեւոր Մաղթանաց։*

*Նորապէս արտագրեալ՝ համեմատութեամբ հնագոյն եւ ընտիր ընտիր ձեռագիր օրինակաց։ Եւ տպագրեալ արդեամբք՝ չորհ Մկրտիչ ամիրայի՝ միրիճանեանց. ի փառս Տեառն, եւ ի պատիւ Հրեշտակային սուրբ Վարդապետիս։ Ի հայրապետութեան մեծի գահին էջմիածնի՝ տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսի ամենայն Հայոց։ Եւ սրբոյ աթոռոյն Երուսաղէմի տեառն Յովակիմայ արհիապատիւ Պատրիարքի։ Եւ ի պատրիարքութեան մեծի քաղաքիս տեառն Զաքարիայ ազգասէր եւ երջանկայարգ Արքեպիսկոպոսի. որոյ հրամանաւն եւ տպագրեցաւ. ներ մայր դպրատանս Հայոց։*

*Յամի Տեառն՝* 1790։ *Եւ ի մերումս թուականի* ռմլթ։ *յ... (պատառուած)։*

*ի Կոստանդնուպօլիս Քաղաքի։ Ի տպարանի Յօհաննէսի եւ Պօղոսի։*

*ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ*

Ազդարարութիւն ինչ յաղագս տպեցման սորոյ մատենիս։

*Եւ արդ՝ ... այսպէս պատահեցաւ. պատուազարդ իշխանազնեա պարոնին՝ միրիճանեան չորհ մկրտիչ ամիրայիս. փափագն՝ յիրաւի ի վաղուց յայցեալ ունէր ի սրտի՝ պարոնին բարւոյ լինել հեղինակ. այսինքն, ընել գլուխ, եւ գպատիւ դպրատանս հայոց, եւ յարգի ցուցանել զնա բազմազան բարերարութեամբ՝ ի յօգուտ, եւ ի դիւրահութիւն ազգիս մերոյ. առակայն՝ ոչ եղեւ յաջողեալ ցարդ ժամանակի, սակս զանազան գիտուածոց նեղհակակնաց, եւ կամ վասն անյաջողութեան պարագայից պիտոյից։ Բայց մինչ այժմ վերստին կամեցողութեամբ ազգիս, եւ վեհափառ Հրամանաւ Սրբազան Պատրիարքի մեծի պօլսոյս, Տեառն Զաքարիայ ազգասէր, եւ գերահամբար արք եպիսկոպոսին՝ կարգեցաւ ի վերակացութիւն դպրատանս. եւ ըստ յաջողելոյ Տեառն՝ փութացաւ հնարել զտպարանս ներ դպրատան Ազգիս Հայոց, ի լոյս ածել տպմամբ զգրեանս պիտանիս, եւ զիմաստալիս. որպէս աչս ակներեւ տեսանի այս մատեան՝ սրբոյն գրիգորի նարեկացւոյ՝ հրեշտակական վարդապետի. իբրու նախընծայ, եւ երեխայրի՝ ի նորատունկ բուրաստանէ դպրատանս. զոր արդեամբ եւ զոյիւք իւրովք, պատկանաւոր զրիւք, փոքր քանակութեամբ, գեղեցիկ եւ նորակերտ գրովք, եւ*

digitised by A.R.A.R.@

տպել, եւ հանել յերեւան՝ միայն գլխաւոր եւ հինգ գլուխ գաղթան՝ որք հարկաւորքն են աղօթողաց անձանց. եւ գրեթէ՝ եւ եւս մեծամեծս ունիմք տեսանել՝ գրեր չահեկանս, եւ զարգիւնաւորս: Վասնորոյ արժա՛ն է յիշատակել զարժանն յիշատակի՝ զպատճառն այսր գործոյ, որ ամենայն կարողութեամբ՝ հոգ տարեալ ի լրումն հան: Յիշել արժա՛ն է նաեւ՝ զաշխատաւորսն սորա, այսինքն, զգրաչարն, եւ զգրուօղն զկապարեայսն. նաեւ զմշակսն՝ եւ զայլ գործաւորս սորա, որ եւ յիշողքդ՝ յիշեալ լինիջիք՝ յաստուծոյ մերմէ ամէն:

Կիւլպէնկեան Մատենադարան
248 Նար
1790

## 367

ՍՏԵՓԱՆՆՈՍ ԵՊՍ. ՍԻՒՆԵՑԻ. ՈՂԲՔ ԵՒ ՀԱՌԱՉԱՆՔ Ի ԴԻՄԱՑ ՄՕՐ ՄԵՐՈՑ ՍՐԲՈՑ ԱԹՈՌՈՅՆ ԷՋՄԻԱԾՆԻ: Նոր Նախիջեւան, տպ. Բարձր Սրբազնութեան (Ս. Խաչ Վանք), 1790. 80 էջ:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Ա

ԲԱՆ ԲԱՐԱՌՆԱԿԱՆ՝ ոգեալ զիմաստերար՝ ի դիմաց Վաղարշապատու Կաթուղիկէին Էջմիածնի:

Զքեզ աղաչեմ ով տէր Յիսուս.
լեր ձեռնտու ինձ լքեալոյս:

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Բ

ՈՂԲՔ ԵՒ ՀԱՌԱՉԱՆՔ ի դիմաց Մօրն մերոյ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի:

Արարեալ Տեառն Ստեփաննոսի Նախագահ Միտրապօլտին Սիւնեաց՝ որդւոյ Տարօնյին Իշխանին, ի խնդրոյ Շնորհազարդ Սուրբ Վարդապետին Խաչատրոյ Կեչառեցւոյ, ի չիք Թուականիս մերոյ:

Տպագրեալ ի Հայրապետութեան Լուսանկար Մօրն մերոյ Սրբոյ Դահոյն Էջմիածնի՝ Տեառն Ղուկասու Սրբազնասուրբ Կաթուղիկոսի Ամենայն Հայոց: Հրամանաւ եւ ծախիւք՝ Սուրբ Աթոռոյն Էջմիածնի ծայրագոյն նուիրակ՝ Ռուսաց երկրի ամենայն ազգիս Հայոց՝ Առաքելաշաւիղ Առաջնորդ՝ Տեառն Յովսեփայ Սրբազան Արք Եպիսկոպոսի Սանահնեցւոյ Արղութեանց:

Յամի Տեառն 1790. յուլիսի 26: Ի տպարանի նորին Բարձր Սրբազնութեան: Ընդ Հովանեաւ Երկնահանդէս Սուրբ Խաչ Վանիցն, որ ի Նորն Նախիջեւան:

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Վերջաբանութիւն համառօտ:

Փառք...

...Ուստի՝ հարազատ որդիքդ Սրբոյ Դահոյն Միածնաէջի՝ այժմ սիրով մեծաւ ընդգրկեալ վայելեցէք ի յամենախորհ ճաշակս քաղցրութեան բանից՝ սոյն Երջանկացս. եւ ըղձաւել յուսով քաղցրացարուք ի յաղօթս, առեն Աղզադոսւ կենաց՝ Պանծացուցչին մեր՝ Տեառն Յովսէփայ Աստուածարան Վարդապետին՝ եւ Առաքելաշաւիղ Սրբազան Արհի Եպիսկոպոսին՝ Ռուսաց երկրի՝ ամենայն ազգիս Հայոց՝ Քրիստոսափառ Առաջնորդին. յոյր ձեռն վայելեցիք եւ վայելելոց էք զբազմազան բարութիւնս:

Որ ի յօգուտ Լուսաւորչազաւակ ազգին իւրոյ՝ զանտանելի պարտս Տպարանին, յուսով Բարեխօսացդ՝ բառնալեալ՝ ի Սանկտ Պետրբուրգ Մայրաքաղաքէն զՏպարանն ի նորն Նախիջեւան փոխադրեալ՝ զհաստատութիւն ետ ի նորակառոյց Սուրբ Խաչ Վանքն Երկնահանդէս:

Որոյ զհաստատութիւն՝ անզրդուելի արասցէ տէր յաւիտեանս յաւիտենից:

Ի վախճան բանիս՝ յիշեսջիք ի Քրիստոս՝ զի փութիչսն բնակեալ զրոցի հանգուցեալ Մանուկն, զկենակիցն նորա Զանազանն, զհանգուցեալ որդին՝ Յոհանն. զդուստրն Հռիփսի-

digitised by A.R.A.R.@

մէն, զյոհանն կենակից Հոփսիմէն, զդուստրն նոցա՝ Մարիամ, զայրն նորին՝ Դաւիթն, եւ զՄատաթիայն զօգտեան. որք սիրահար բղձիւ մանկեկեան յազատութիւն պարտուցն տպարանին. որոց զվարձս ընկալցի տէր ի հանդէս իւր, եւ վարձատրեսցէ կենդանեաց եւ ննջեցելոց։

Յիշեսջիք նաեւ զհօթինս օրհնեալ ժողովրդեան, որք այժմ ի փոխիչան բնակին, զպարոն Յարութիւն ապրարեան, զպարոն Սանփան ենգիբարեան, զպետր պարոն Յօհանն աղյանեան, զմահտեսի Աւետիքն սոզօմնեան, զպարոն Միրզայն Թէվուսեան, եւ զպարոն Յովհաննէսն յարութիւնի որդի, որք յառաջագէս զատն հատարակ ննջեցելոց եւ կենդանեաց հօթունցուց՝ օգնութիւն արարին պարտուցն տպարանին. որոց տէր օգնեսցէ։

Նոյնպէս յիշեսջիք եւ զզանչեցն՝ ի փոխիչան բնակեալ զպարոն Մարգարն բաղդասարեան, որ յիշատակ եղեան, եւ կենակցին իւրոյ Եղիսաբեթին, եւ հանգուցելոց ծնողացն՝ Գաղատատուրն եւ Աննային՝ բստ իւր բարեպաշտութեան՝ առատապէս օգնեաց տպարանի պարտուցն։

Յիշեսջիք եւս՝ զփոխիչանցի պարոն Գասպարն ապրահամեան, զպարոն Տօնիկն յովհաննիսեան, զԹոխաթցի մահտեսի զԵրգարէ որդի պարոն Բաչխին. եւ զպարոն Բալասանն զբիգորեան, որ ի կոգման հանգուցելոց հօրաբերն իւրոյ Հոփսիմէին՝ օգնեաց. որոց բզատւրս եւ զնուէրս՝ տէր յիշես ի փառս իւր վերընկալցի, զփոխարէնն հազարապատիկ հատուսցէ, զանուանս իւրեանց ի դպրութեան կենաց գրեսցէ. եւ զյիշատակս իւրեանց՝ անջնջելիս արասցէ։ Եւ դուք՝ որք յիշէք, յիշեալ լիջիք ի քրիստոսէ յաւուրն մեծին. ամէն։

Կիւլպէնկեան Մատենադարան
264 Սա

## 368

ԱՂԵՔՍԱՆԴՐ ԿԹՂ. ՋՈՒՂԱՅԵՑԻ. ԳԱՆՁԱՐԱՆ ՈՒԽՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ. ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ ԵՒ ՁԲՕՍԱՐԱՆ ՀՈԳԵՒՈՐ։ Նոր Նախիջեւան, տպ. Բարձր Սրբազնութեան (Ս. Խաչ Վանք), 1790, 176 էջ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Ա

ԳԱՆՁԱՐԱՆ ՈՒԽՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ. Աղօթամատոյց եւ Զբօսարան Հոգեւոր. Ի ժամ Անմահ Գառինն՝ անարիւն զենման, եւ ի յառանձնութեան՝ ջերմեռանդ Քրիստոնէից՝ կենարարն խոկմունք, եւ եռանդեան զմայլեցուցիչք։ Որք կանխեն առ աւ. մի՛ լիցին երկրայ։

ԱՆՈՒԱՆԱԹԵՐԹ Բ

ԳԻՐՔՈՅՍ, ՈՐ ԿՈՉԻ ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ։ Արարդրեալ Երանելի Հարն մերոյ Աղէքսանդր Կաթուղիկոսին Ջուղայեցւոյ՝ ի պէտս լուսաւորչածին հօտարակ ժողովրդեան, յորժամ Սուրբ Գատառայի խորհրդական արարողութիւն սկսանի, ի յիշատակ չարչարանաց՝ Աստուածայրականի յիսուսի, եւ ի քաւութիւն մեղաց մերոց, յամի տեառն 1687։

Տպագրեալ ի Հայրապետութեան լուսանկար մօրն մերոյ՝ Սրբոյ Գահոյն էջմիածնի՝ Տեառն Ղուկասու Սրբազնասուրբ Կաթուղիկոսի ամենայն Հայոց։ Հրամանաւ եւ ծախիւք՝ Սուրբ Աթոռոյն էջմիածնի ծայրագոյն Նուիրակի, Ռուսաց երկրի ամենայն ազգիս Հայոց՝ Առաջնորդի Տեառն Յովսեփայ Սրբազան Արք Եպիսկոպոսի Սոնահեկեան Արղութեանց։

Յամի Տեառն 1790. ի հոկտեմբերի 24: Ի տպարանի նորին Բարձր Սրբազնութեան։ Ընդ հովանեաւ Երկնահանգէտ Սուրբ Խաչ Վանիցն, որ ի Նորն Նախիջեւան։

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ

Փառք...

Որ յանդգնել կարողացայ զմերս նուաստութիւն՝ տպագրութեամբ ի լոյս ընծայել զայս չահաւէտ՝ օգտակար, եւ սուրբ փրկութեան՝ զՆշոյ Գիրքս լուսափայլ. եւ յաւարտ հասանել զործոյս, ի 1790 Թուոյ, ի Նոյեմբերի 30ին...

digitised by A.R.A.R.@

Այնզի՝ ծնեալս յերկիր անգղիացւոց՝ ի մեծ անուն քաղաքն Լոնդոն, ձեռամբ սկըր-ծապաշտաճառին իմոյ՝ Աղնուատոհմ Գրիգորի Խօճամալեան Յուլղարենց, անդրանիկացայ ի յաղինատարս յերկիրն Ռուսաց՝ ի Հնդրահոյակ և ի Կայսերական Քաղաքն Սանկտ Պետր-բուրգ: Ուրանօր՝ նոյն նախկին բարերարին իմոյ ի ձեռս՝ ծնեալ զգանձ մի արփիատարա անմահ զաւակունս՝ քեզ ի վայել, առատանայի ի ծառայութիւնս:

Իսկ՝ մինչ խնամածուին իմոյ՝ ի գլխովին հոգացութիւն իմ՝ զգոյս իւր վաճառել՝ և զկեանս իւր յիմ վերայ եդեալ՝ եղև վերահասիկ իմանալի և զգալի բնութեանս... Եւ ինքն՝ յերկիր օտար՝ բազմաց անծանօթ՝ և այլալեզու՝ մնացի որբացեալ և անտէրունջ...

Ցանկալոյն իմն՝ անակնունելի բարեպատեհ դիպուածով, բառ հոգւոյն առաւ, ..... եղև ձեռն ամենազօր՝ ...ի յազգէ նախարարացն Հայոց ծագեալ՝ Տեառն Յովսեփայ Սրբազան Արհի Եպիսկոպոսին և Ազգասէր Դիտին՝ բոլորից Ռուսաստանեայց՝ Ազգիս Հայոց լըրման՝ Աստրախանուց Առաջնորդին, և Աստուածպաշտև յարահսկող Հովուին, անճառելի խնամակալութեամբ ի վերայ իմ:

...Մինչև բերեալ հանգոյց զիս՝ ի բնակից փափաքելի Քաղաքին Նոր Նախիջևանու՝ ի նորակառոյց՝ Զարմանալին՝ և Հրաշատեսիլ Վանքն Երկնահանգէտ, յանուն Կենարար Սուրբ Խաչին՝ ի նորին Սրբազնութենէն կառուցեալ:

...Եւ ի նշան և ապահովութեան՝ ...առատաբերեմ նախաղէս զԱղօթագիրքս այս ամենահամ և քաղցրաճաշակ, արժանի ծնեալ ի յիմ անախտ արգանդէ, ի յանուն և ի փառս՝ ի Մտերսա և ի Սուրբ բնակեալ՝ բարեկէր հոյակապին՝ հատորակ եղբայրութեան:

...Ընդ որոյ՝ և ոչ դանդաղիմ յիշել և զպայծառն՝ զիս ի փառս բարձրացուցանողացն, քեզ բարեկարգ· զի ընդ իս ունիցիս զուրախութիւնդ լիովին:

Քանզի՝ զնուէրս իւրեանց՝ զոր մատուցին ինձ, ի փառս քո՝ Ազգ Հայկեան, ունին թողուլ մշանջենաւորս առ իս, և ոչ վերադարձուցանել առ ինքեանս· զի այնու՝ զզանազան գրեանս՝ ի պայծառ անուն իւրեանց՝ արժանի յիշէն՝ ի լոյս ընծայեցեմ, զվրանելոյ արգիւնս յիմ գործոց՝ ի պէտս իմ արփիատարաս Դպրոցացն՝ ուսումնասէր հասարակութեանս ծախեցեմ, և զմնացեալ զումարն զրամոց՝ առ իս յինքն ամփոփեալ՝ ի Նորագոյն գրեանց յառաջացուցումն աշխատասիրեցեմ· որքան նորակառոյց Քաղաքս այս, և Արդարադատ Իշխանութիւնս՝ ի վերայ երկրի հաստատութիւն կալեալ՝ յիշատակիցի:

...Արդ՝ բառ ի վեր անդր անուս վերամբս, լուեալ և ուղեկիցեալ ի բանից՝ Թիֆլիզցի Տէր Սահակեանս Համբառապորդ Ասալ Քահանայիս, զիմս և շուրջ զինեւ եղեալ՝ Հայակալ Պանծալի Դպրոցացն զկատարելութիւն, զկարգ, և զհանդամանս, ի Սուրբ բնակեալ՝ Տունկն Օրհնութեան, և Ծառուիցն Բարեպաշտութեան, Զուգալիցի Պայծառ Իշխան Աղայ Յօհանջանն Քաղաահանձար և Կորովամիտ...

...Յաղօթս պարապեցուք առ ամենայաւերն Աստուած, ...զի ...զյիշատակս նորա ի յանմոռանալի նախատեսութեան մատենի իւրում՝ արձանացուսցէ· առս՝ բնաւից փափագելի կենին իւրոյ, և զաւարթածաղիկ Դաւերցն, և արեւմտոյ մերձաւորացն, յաւելումն և երկարութիւն շնորհեսցէ· և ի հանդերձեալումն՝ երջանիկ կենացն յաւիտենականաց, երանական պսակաց, և իւրն տեսութեան անճառելի փառաց՝ արժանիս արասցէ զՄեծախորհուրդ Այրս արժանաւոր:

Յիշեսցուք ընդ նմին՝ և զ՚ի Քրիստոս հանգուցեալ կողակիցն իւր Գուլխատան Տիկինն, զՀայրն՝ Քալանթար Յակոբն, զՄայրն՝ Մէքրան Տիկինն, զԳաղն իւր՝ Դէլբար Աղայն, և զՀանքին իւր՝ Թագուհի Տիկինն· որոց ամենեցուն առ հասարակ՝ ամենազօրն Աստուած՝ բառ մեծի ողորմութեան իւրում ողորմեսցի, և անճառելի ներողութեամբն զթասցի:

Նաև՝ ...պարտաւոր զքեզ վարկցես յիշման զ՚ի առաձէ հզօրէ յայտնեալ, ի յազգէ նախարարացն Հայոց՝ Զաքարեայ Ամիր Սպասալարին (ի 1183 փրկչական թուականին զօրացելոյն.) շառաւիղեալ՝ զՅովսէփ Սրբազան Արք Եպիսկոպոսն, զներջանիկ Այրն Աստուծոյ. ընդ որոյ և զբառ մարմնոյ պաղն՝ զիշխան Դաւիթն, և զհանգին Լէյլին, և զծնօղսն արին՝ զիշխան Շիօշ բէկն՝ ի տարապարտուց զաղանելոյն ի յանօրինաց. և զպարկեշտազնեաց Մայրն՝ զՔէթէվան Տիկինն, և զվաղաթառամ զեղբայրն՝ ընդ քուէրն, զիշխան Մովսէսն, զԹարասաանն, և զՄարիամն. և զայլ ի Քրիստոս հանգուցեալ զազգայինսն:

Կաղմեց՝ Ա. Գ.

(Տար. 22)

digitised by A.R.A.R.@